

Համարը ՀՕ-139-Ն Տիպը Օրենսգիրք Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1 Հոդ.1186.1 Ընդունող մարմինը ՀՀ Ազգային ժողով Ստորագրող մարմինը ՀՀ Նախագահ Վավերացնող մարմինը Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 07.01.2014	Տեսակը Ինկորպորացիա Կարգավիճակը Գործում է Ընդունման վայրը Երևան Ընդունման ամսաթիվը 05.12.2013 Ստորագրման ամսաթիվը 28.12.2013 Վավերացման ամսաթիվը Ուժը կորցնելու ամսաթիվը
--	--

☒ Կապեր այլ փաստաթղթերի հետ
☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐԸ

ԲԱԺԻՆ V

ՀԱՏՈՒԿ ՎԱՐՈՒՅՑՆԵՐ

«ԳԼՈՒԽ 31.4

Ազատությունը սահմանափակված կամ ազատությունից զրկված օտարերկրացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից փախստականի կարգավիճակ կամ ապաստան տրամադրելու հայցով իրավասու մարմինների կողմից կայացված որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ վարույթը

ՀՈԴԿԱԾ 222.12. Ազատությունը սահմանափակված կամ ազատությունից զրկված օտարերկրացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից փախստականի կարգավիճակ կամ ապաստան տրամադրելու հայցով իրավասու մարմինների կողմից կայացված որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը

1. ՀՀ վարչական դատարան կարող է դիմել ՀՀ պետական սահմանն ապօրինի հատած կամ օտարերկրյա պետությանը հանձնման ենթակա օտարերկրացի կամ քաղաքացիություն չունեցող անձը, ում ազատությունը օրենքով սահմանված կարգով սահմանափակված կամ ով ազատությունից զրկված է կամ ում նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում ՀՀ տարածքում, ապաստանի հայցի կամ փախստականի կարգավիճակի ձանաչման վերաբերյալ «Փախստականների կամ ապաստանի մասին» ՀՀ օրենքում սահմանված լիազոր մարմնի կայացրած բազասական որոշումը վիճարկելու պահանջով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերով դատական բողոքարկման, հայցադիմումի պնդության և դրա արդյունքում կայացված դատական ակտի վերաքննիչ և վճռաբեկ վերանայման վրա տարածվում են սույն օրենսգրքի ընդհանուր դրույթները, եթե սույն գլխով այլ բան նախատեսված չէ:

ՀՈՂՎԱԾ 222.13. Վարչական դատարան դիմելը և հայցադիմումների քննության ժամկետները

1. Սույն օրենսգրքի 222.12 հոդվածի 1-ին մասում նշված գործերով վարչական դատարան հայցադիմում կարող է ներկայացվել «Փախստականների կամ ապաստանի մասին» ՀՀ օրենքում սահմանված լիազոր մարմնի կայացրած բազասական որոշման մասին տեղեկանալու օրվանից սկսած 10 օրվա ընթացքում:
2. Պատասխանողը հայցադիմումի պատասխան կարող է ներկայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո մինչև գործի դատաքննությունը:
3. Ղատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված դատավարության մասնակիցների չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:
4. Վարչական դատարանը հայցադիմումը ստանալուն հաջորդող մեկամսյա ժամկետում սույն օրենսգրքով սահմանված կարգով պարտավոր է քննել և կայացնել ու հրապարակել գործն ըստ էության լուծող դատական ակտ:

ՀՈՂՎԱԾ 222.14. Վերաքննիչ և վճռաբեկ բողոքարկման ժամկետները

1. Սույն օրենսգրքի 222.13 հոդվածի 4-րդ մասում նախատեսված գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է ներկայացվել այդ ակտը հրապարակվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:
2. Վերաքննիչ բողոքի պատասխան կարող է ներկայացվել վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը ստանալուց հետո մինչև գործի դատաքննությունը:
3. Վերաքննիչ դատարանը բողոքը քննում և համապատասխան որոշում է կայացնում ու հրապարակում 15-օրյա ժամկետում:
4. Վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է ներկայացվել այդ ակտը հրապարակվելուց հետո՝ 5-օրյա ժամկետում:
5. Վճռաբեկ դատարանը բողոքը քննում և համապատասխան որոշում է կայացնում ու հրապարակում 5-օրյա ժամկետում:»:

Հոդված 132. Վերաքննիչ բողոք բերելու ժամկետը

1. Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով **«և 222.14 հոդվածի 1-ին մասում նախատեսված դեպքում»** դատական ակտը բողոքարկելու դեպքերի:
2. Միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:
3. Ղատավարության մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վերաքննիչ բողոք բերելու այն օրվանից սկսած՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին: Այդպիսի վերաքննիչ բողոք չի կարող բերվել, եթե դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է քսան տարի:
4. Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված ժամկետներից հետո բերված վերաքննիչ բողոքը վերաքննիչ դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և դատարանն այն բավարարել է:

(26.04.16 ՍՂՈ-1268 որոշմամբ 132-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) չի ճանաչվում հարգելի:)

Հոդված 156. Վճռաբեկ բողոք բերելու ժամկետը

1. Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով «և 222.14 հոդվածի 1-ին մասում նախատեսված դեպքում» դատական ակտը բողոքարկելու դեպքերի:

2. Միջանկյալ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

3. Դատավարության մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վճռաբեկ բողոք բերելու՝ սկսած այն օրվանից՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում վճռաբեկ բողոք չի կարող բերվել, եթե դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է քսան տարի:

5. Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված ժամկետները լրանալուց հետո բերված վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և դատարանն այն բավարարել է: